



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«01» օգոստոսի 2019 թվականի N: 154 ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ԲԱԴԻՇՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2019 թվականի հուլիսի 31-ի N:01/06/9390-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինողի 2019 թվականի օգոստոսի 1-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող Կարեն Բադիշյանին 2019 թվականի օգոստոսի 2-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ՝ «Սևան Ստարթափ Սամմիթ» 2019-ի տարածքում կայանալիք նորաստեղծ «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության» շնորհանդեսին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի օգոստոսի 2-ին:
3. Կարեն Բադիշյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի կետ 6ի2տ